ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի 2019 թվական N 234-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 27-33-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի նախագիծը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի, ծախսերի և եկամուտների հետևյալ հաշվեկշռվածությամբ՝

1) եկամուտներ՝ 3 992 675.0 (երեք միլիարդ ինը հարյուր ինսուներկու միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,

2) ծախսեր՝ 3 992 675.0 (երեք միլիարդ ինը հարյուր ինսուներկու միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սահմանել որ՝

Համայնքի ղեկավարը համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել վերաբաշխումներ բյուջեով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 10%-ի սահմաններում, սույն որոշումով հաստատված ծախսերի գործառական դասակարգման առանձին խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև ենթախմբերի ներսում, այն պայմանով, որ թույլ չտրվի սույն որոշմամբ յուրաքանչյուր ենթախմբի գծով նախատեսված հատկացումների կրճատում ոչ ավել, քան 20%-ի չափով կամ ավելացում 35%-ից ավելի չափով:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին սույն որոշմամբ հաստատված հատկացումների սահմաններում.

1) համայնքի ավագանու մշտական գործող համապատասխան հանձնաժողովի ներկայացմամբ հաստատել սոցիալական ծրագրերով նախատեսված ծառայությունների և շահառուների ցանկն ու կազմակերպել վճարումների կատարումը,

2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ ծախսերի (միջոցառումների կազմակերպում), նվիրատվությունների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը և ծախսերի իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Կողմ (23) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ա. Մխիթարյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա.Ղարաղազարյան _____

Հ.Պողոսյան _____

Ա. Առաքելյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

քաղաք Գյումրի
«20» դեկտեմբերի 2019 թվական

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի
համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 20-ի
N 234-Ն որոշման

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
(մարզի անվանումը)

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
(համայնքի անվանումը)

2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Գյումրի համայնքի
(համայնքի անվանումը)

ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի N 234-Ն որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Սամվել Միսակի Բալասանյան
(անունը, հայրանունը, ազգանունը)